ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Միասնական նիստը կայացել է 2024թ. հոկտեմբերի 28 ին: Նիստին ներկա են խորհրդի 9/ինը / անդամ:

Նիստին ներկա են նաև դպրոցի տնօրեններ Դ.Մինասյանը /N55 դպրոց/, Ա.Եղյանը /N1 դպրոց/, Ա.Սեյրանյանը /N71 դպրոց/:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ծանոթություն

2. Դպրոցների կոլեգիալ կառավարման խորհուրդի նախագահի ընտրություն

3. Դպրոցների կոլեգիալ կառավարման խորհուրդի քարտուղարի ընտրություն

4. 2024-2025 ուստարվա դպրոցների կառավարման խորհրդի աշխատակարգի և ժամանակացույցի հաստատում

5. Դպրոցների հաստիքային միավորների ցուցակների քննարկում / զեկ.՝ Դ.Մինասյան, Ա.Եղյան, Ա.Սեյրանյան/

6. Դպրոցների 2023-2024 ուստարվա ներքին գնահատման արդյունքների քննարկում / զեկ.՝ Դ.Մինասյան, Ա.Եղյան, Ա.Սեյրանյան/

7. 2025թ.-ի բյուջեների նախագծի քննարկում

8. Լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների, խմբակների, երկարօրյա կրթականն ծառայությունների, խմբակների հաստատում, գոյացած գումարի բաշխում, ուսուցչի վարձատրության սահմանում / զեկ.՝ Դ.Մինասյան, Ա.Եղյան, Ա.Սեյրանյան/

9. Դպրոցների Ներքին կարգապահական կանոնների վերամշակում՝ լրացումներ և փոփոխություններ

10. Դպրոցների 2023-2024 ուստարվա Ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ հաշվետվություն / զեկ.՝ Դ.Մինասյան, Ա.Եղյան, Ա.Սեյրանյան/

11. Դպրոցների 2023-2024 ուստարվա Զարգացման ծրագրի հաշվետվություն / զեկ. Դ.Մինասյան, Ա.Եղյան, Ա.Սեյրանյան/

12. Դպրոցների 2024-2025 ուստարվա Ուսումնական, Ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկում, / զեկ. Դ.Մինասյան, Ա.Եղյան, Ա.Սեյրանյան/

13. Դպրոցների ՆԴՎ պլանի հաստատում:

14. Նոր դասարանի կազմավորում:

15. Համադպրոցական միջոցառումների տարեկան պլանի հաստատում:

16. ԿԱՊԿՈՒ սովորողների կազմ

17. Ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգ

18. Այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ 1- Դպրոցների կառավարման խորհրդի անդամ Ռոզա Հարությունյանին, ով բացեց նիստը՝ որպես խորհրդի տարիքով ավագ անդամ: Նա կարևորեց կառավարման խորհրդի դերն արդյունավետ աշխատանքի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի բոլոր անդամները, նրանցից յուրաքանչյուրը ներկայացավ: Հույս հայտնեցին, որ իրենց հետագա համագործակցությունն ու համատեղ աշխատանքը կլինի արդյունավետ:

Ռ. Հարությունյանը առաջարկեց առաջադրել կառավարման խորհրդի թեկնածուների: Առաջադրվեցին Հասմիկ Շամամյանի և Գայանե Սաֆարյանի թեկնածությունները:

Ռ. Հարությունյանը առաջարկեց կարգի համաձայն անցկացնել փակ գաղտնի քվեարկություն. ընտրությունը կատարել քվեաթերթիկի վրա նշում կատարելով:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքում խորհրդի անդամների ընդհանուր թվի առավելագույն ձայներ ստացավ /7/յոթ/ կողմ/ Գայանե Սաֆարյանը:

Գայանե Սաֆարյանը Խորհրդի քարտուղար առաջադրեց Հասմիկ Շամամյանի թեկնածությունը:

Բաց քվեարկության արդյունքում Հասմիկ Շամամյանի թեկնածությունն անցավ միաձայն:

Դպրոցների միացյալ կառավարման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ՝

Համաձայն ԿԳՄՍ նախարարի՝ 2010թ մարտի 18-ի N 113-Ն հրամանի / վերջին փոփոխությունը՝ 2024թ մայիսի 14-ի N 44-Ն / փակ, գաղտնի քվեարկության արդյունքում առավելագույն ձայներ ստացած /7/յոթ// Գայանե Սաֆարյանին համարել դպրոցների միացյալ կառավարման խորհրդի նախագահ, իսկ դպրոցների միացյալ կառավարման խորհրդի քարտուղար՝ Հասմիկ Շամամյանին:

ԼՍԵՑԻՆ 4 – Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Գ. Սաֆարյանին: Նա խորհրդի անդամներին ներկայացրեց կ/խ աշխատակարգը և 2024-2025 ուստարվա գործողությունների ժամանակացույցը: Նա նշեց, որ ժամանակացույցը կազմված է ըստ եռամսյակների: Միացյալ խորհուրդը՝ ծանոթանալով նախագահի կողմից ներկայացված 2024- 2025 ուստարվա դպրոցների միացյալ կ/խ աշխատակարգի և ժամանակացույցի բոլոր կետերին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել դպրոցների միացյալ կ/խ աշխատակարգը և 2024-2025 ուստարվա գործողությունների ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ 5– Դպրոցի տնօրեն Դ. Մինասյանին:

Նա հանգամանորեն ներկայացրեց դպրոցի 2024-2025 ուստարվա հաստիքային ցուցակը իր բոլոր անվանումներով: Ցուցակը կցվում է / --- էջ /:

Միացյալ Կ/խ լսելով զեկույցը

ՈՐՈՇԵՑ

Հիմք ընդունելով զեկույցը, հավանություն տալ հաստիքային միավորների ցուցակներին:

ԼՍԵՑԻՆ 6– Լսեցին դպրոցի տնօրեն Դ. Մինասյանին:

Նա հանգամանորեն ներկայացրեց 2023-2024 ուստարվա ներքին գնահատման արդյունքները: Հաշվետվությունը բաղկացած է վեց մասից: Մանրամասն ներկայացվեցին դպրոցը բնութագրող տվյալները: Ցույց տրվեց սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանման նախադրյալները, դպրոցի շենքի և տարածքի անվտանգ շահագործման առկա պայմանները՝ վերանորոգման ենթակա կոյուղագծերը և վնասված պատերը: Դպրոցի աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին: Նկարագրելով ցուցանիշները՝ հաշվետվությունը հաստատում է, որ դպրոցում բոլոր պայմաններն առկա են արդյունավետ դասապրոցես ապահովելու համար:

Ներկայացվեց դպրոցի սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշներ: Զեկուցողը մանրամասն խոսեց արդյունքների, ներկա ուստարում գրանցած հաջողությունների մասին: Բոլոր արդյունքները ներկայացված են աղյուսակներով: Զեկուցողը փաստեց, որ ուժեղ կողմերը նկատելիորեն շատ են, իսկ թույլ կողմերի մեծ մասը պայմանավորված է օբյեկտիվ պատճառներով:

Միացյալ Կ/խ լսելով զեկույցը

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ 2023-2024 ուստարվա հաշվետվությանը:

ԼՍԵՑԻՆ 7 – Դպրոցի գլխավոր հաշվապահ Ս. Նասխուլյանին:

Նա հանգամանորեն ներկայացրեց դպրոց ՊՈԱԿ-ի 2025 թ-ի բյուջեի նախագիծը: Փաստաթուղթը կցվում է:

Միացյալ Կ/խ լսելով զեկույցը

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ գլխավոր հաշվապահի ներկայացրած նախագծին:

ԼՍԵՑԻՆ 8 – Դպրոցի տնօրեն Դ. Մինասյանին:

Նա ներկայացրեց դպրոցում 2024-2025 ուստարում Քեմբրիջյան անգլերենի, ռուսերենի, չինարենի բանավոր խոսքի զարգացման, շախմատի, վոլեյբոլի, բրազիլական ըմբշամարտի, պարի,նկարչության, կար ու ձևի, մենթալ թվաբանության / այլընտրանքային մաթեմատիկա /, «Արմաթ լաբորատորիայի», ռոբոտաշինության, «Առողջ ապրելակերպ» /պարտադիր/, երկարօրյա դասապատրաստման լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների իրականացման կարևորությունը և գոյացած գումարի բաշխումը:

Ինչպես նաև ընդգծվեց «Դպրոցական թատրոն », «Վերածնունդ ազգային պար», «Արաբերեն » պետական խմբակի իրականացման կարևորությունը:

Միացյալ Կ/խ լսելով զեկույցը և հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ կառավարության 04.11.2010. N1496-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի

դիմումներով հանրակրթական և մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգի» 13-րդ կետի և դպրոցի տնօրենի դիմումը

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ դպրոցում Քեմբրիջյան անգլերենի, ռուսերենի, չինարենի բանավոր խոսքի զարգացման, շախմատի, վոլեյբոլի, բրազիլական ըմբշամարտի, պարի,նկարչության, կար ու ձևի, մենթալ թվաբանության / այլընտրանքային մաթեմատիկա /, «Արմաթ լաբորատորիայի», ռոբոտաշինության, «Առողջ ապրելակերպ» /պարտադիր/, երկարօրյա դասապատրաստման լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների «Դպրոցական թատրոն », «Վերածնունդ ազգային պար», «Արաբերեն » անվճար խմբակի կրթական ծառայությունները շարունակելու հարցին և առաջարկել դպրոցի տնօրենին

1. 7-9-րդ դասարաններում սովորողների համար «**Քեմբրիջյան անգլերեն»** ծառայությունը մատուցել ըստ մակարդակների:

2. Վճարովի լրացուցիչ կրթական դասընթացների ամսական պարապմունքի վարձավճարի չափը՝
   - **Քեմբրիջյան անգլերեն**- 2500 / երկու հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ , յուր. պարապմունքի տևողությունը՝45 րոպե:
   - **Ռուսերեն** - 2500 / երկու հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ , յուր. պարապմունքի տևողությունը՝45 րոպե:
   - **Չինարեն** – 15 000 / տասնհինգ հազար / ՀՀ դրամ, յուր. պարապմունքի տևողությունը՝60 րոպե: Շաբաթական 3 պարապմունք.:
   - **Շախմատ** - 15 000 / տասնհինգ հազար / ՀՀ դրամ, յուր. պարապմունքի տևողությունը՝90 րոպե: Շաբաթական 2 պարապմունք:

- **Բրազիլական ըմբշամարտ** - 7 000 / յոթ հազար / ՀՀ դրամ, յուր. պարապմունքի տևողությունը՝ 60 րոպե: Շաբաթական 2 պարապմունք.:
- **Պար** - 7 000 / յոթ հազար / ՀՀ դրամ, յուր. պարապմունքի տևողությունը՝ 60 րոպե: Շաբաթական 2 պարապմունք.:
- **Նկարչություն** - 5 000 / յոթ հազար / ՀՀ դրամ, յուր. պարապմունքի տևողությունը՝ 40 րոպե: Շաբաթական 2 պարապմունք.:
- **Այլընտրանքային մաթեմատիկա(մենթալ թվաբանություն)՝ 15000դր** - 15 000 / տասնհինգ հազար / ՀՀ դրամ, յուր. պարապմունքի տևողությունը՝ 30 րոպե: Շաբաթական 2 պարապմունք:
- **Երկարօրյա դասապատրաստում /տարրական դպրոց/** – յուրաքանչյուր աշխատանքային օր 12:00-19:00:
- **Երկարօրյա դասապատրաստում /միջին դպրոց/** – յուրաքանչյուր աշխատանքային օր 13:30-19:00:

1. Դասապատրաստում / տարրական /՝ 25000դր.
2. Դասապատրաստում / միջին /՝ 30000դր.
3. Սնունդ՝ 27000դր.
4. Բրազիլական ըմբշամարտ կամ պար՝ 7000դր.
5. Այլընտրանքային մաթեմատիկա(մենթալ թվաբանություն)՝ 15000դր.
6. Նկարչություն՝ 5000դր.
7. Կար ու ձև /մոդելավորում/ 7000դր.
8. Քեմբրիջյան անգլերեն՝ 5000 դր.
9. Ռուսերեն բանավոր խոսքի զարգացում (I դասարան- 2500դր.
   II-IV դասարաններ 5000 դր.
   V-IX դասարաններ)՝ 2500 դր.

Ամբողջական փաթեթի ընտրության դեպքում կիրառել զեղչ՝ արժեքը սահմանելով /տարրական/ 70000դր. (յոթանասուն հազար ՀՀ դրամ):

Ամբողջական փաթեթի ընտրության դեպքում կիրառել գեղչ՝ արժեքը սահմանելով /միջին/ 75000դր. (յոթանասունհինգ հազար ՀՀ դրամ):

Ամբողջական փաթեթը առանց սննդի ընտրելու դեպքում/ տարրական/ կիրառել գեղչ՝ սահմանելով 50000դր. (հիսուն հազար ՀՀ դրամ):

Ամբողջական փաթեթը առանց սննդի ընտրելու դեպքում /միջին/ կիրառել գեղչ՝ սահմանելով 55000դր. (հիսունհինգ հազար ՀՀ դրամ):

Միևնույն ընտանիքից 2 և ավել երեխայի ընդգրկվածության դեպքում սահմանել գեղչ ևս 20 տոկոս:

Անվճար՝ սոցիալապես անապահով ընտանիքի երեխա, ուսուցչի երեխա, դպրոցում աշխատող տատիկի 2-րդ թոռնիկը:

Ուսուցչի վարձատրություն՝ 2500 ՀՀ դրամ առանց հարկերի և պարտադիր վճարների:

3. Դասընթացների սկիզբը սահմանել ուսումնական պարապմունքներից հետո:
4. Քեմբրիջյան անգլերենի և Ռուսերենի վարձավճարից ազատել սոցիալապես անապահով ընտանիքների , դպրոցի ուսուցիչների երեխաներին և դպրոցի ուսուցիչների թոռնիկներին / ըստ սահմանված փաստաթղթի և դասղեկի հիմնավորման /:
5. Ծառայությունից գոյացած գումարը ներառել դպրոցի արտաբյուջետային հաշվում և ծախսել ըստ խորհրդի սահմանած շահույթի տնօրինման հիմնական ուղղությունների:

Լրացուցիչ վճարովի կրթական ծառայություններից գոյացած գումարի բաշխման մասին ցուցակը կցվում է:

ԼՍԵՑԻՆ 10 , 11– Դպրոցի տնօրեն Դ. Մինասյանին:

Նա հանգամանորեն ներկայացրեց 2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների, զարգացման ծրագրի՝ հաշվետվությունը /կցվում է /:

Միացյալ կ/խ

ՈՐՈՇԵՑ

Դպրոցի 2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքը, զարգացման ծրագիրը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ 12 – Դպրոցի տնօրեն Դ. Մինասյանին:

Նա հանգամանորեն ներկայացրեց 2024-2025 ուստարվա ուսումնական,ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը, զարգացման ծրագիրը /կցվում է /:

Միացյալ կ/խ

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ դպրոցի 2024-2025 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքին, զարգացման ծրագրին :

ԼՍԵՑԻՆ 13 – Դպրոցի տնօրեն Դ. Մինասյանին:

Նա հանգամանորեն ներկայացրեց 2024-2025 ուստարվա ՝ ՆԴՎ պլանը, /կցվում է /:

Միացյալ կ/խ

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ դպրոցի 2024-2025 ուստարվա ՆԴՎ պլանին :

ԼՍԵՑԻՆ 14 – Դպրոցի տնօրեն Դիանա Մինասյանին:

Նա հանգամանորեն ներկայացրեց դպրոցի 2024-2025 ուստարվա դասարանների խտությունը: Հայերենով ուսուցմամբ 5-րդ դասարանում կրթությունը շարունակելու նպատակով դիմել է թվով 17 աշակերտի ծնող:

Այս պարագայում նպատակահարմար է ունենալ ևս մեկ 5-րդ թեր ծանրաբեռնված դասարան:

Միացյալ Կ/խ լսելով

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ դպրոցում բացել թեր ծանրաբեռնված 5-րդ դասարան:

ԼՍԵՑԻՆ 15– Դպրոցի տնօրեն Դիանա Մինասյանին:

Նա հանգամանորեն ներկայացրեց դպրոցի 2024-2025 ուստարվա ընթացքում նախատեսված համադպրոցական միջոցառումների տարեկան պլանը:

Միացյալ կ/խ

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ դպրոցի 2024-2025 ուստարվա համադպրոցական միջոցառումների տարեկան պլանին:

ԼՍԵՑԻՆ 16 - Դպրոցի տնօրեն Դիանա Մինասյանին: Նա հանգամանորեն ներկայացրեց դպրոցի 2024-2025 ուստարվա դասարանների խտությունը:

Ներկայացրեց դասարաններում ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը:

Միացյալ Կ/խ լսելով

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ դպրոցում ԿԱՊԿՈՒ սովորողների կազմին:

ԼՍԵՑԻՆ 17 - Դպրոցի տնօրեն Դիանա Մինասյանին: Նա հանգամանորեն ներկայացրեց ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը:
Միացյալ Կ/խ լսելով

ՈՐՈՇՈՒՄ

Հավանություն տալ դպրոցում գոյություն ունեցող ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգին :

Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Գ. Սահակյան

Քարտուղար Հ. Հակոբյան